ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑ ԹԵՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԿԱԶՄԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԷՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Գոհութիւն Աստուծոյ Ամենակալին որ իր սուրբ հովանիին ներքոյ՝ անշարժ և ապահով կը պահպանէ հայ հաւատացեալ մեր ժողովուրդի առաքելական Մայր Եկեղեցին, ընդ իշխանութեամբ քրիստոսատեսս Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան, ահա մօտ տասնեւեօթը դարերէ ի վեր:

Իբրև մեր օրերու Հայրապետ Հայոց, գիտակցութեամբը Մեր համազգային հոգևոր առաքելութեան, տևապէս հետամուտ եղած ենք մեր Եկեղեցւոյ թեմերու և համայնքներու բարեկարգ ու կազմակերպեալ վիճակի պահպանումին, թէ՛ ի Հայաստան, թէ՛ ի սփիւռս աշխարհի, միշտ նախանձախնդիր որ մեր ազգի զաւակները ուր որ ալ գտնուին, անմասն չմնան Հայաստանեայց Եկեղեցւոյ բաշխած հոգևոր սնունդէն և մխիթարութենէն:

Այս մտահոգութեամբ, և քաջ տեղեակ Գանատայի քրիստոսասէր հողի վրայ գործող հայ եկեղեցական համայնքներու բաղձանքին, այլև ընդառաջելով Միացեալ Նահանգաց Արևելեան թեմի թեմական առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի առաջադրանքին, այսու

Մեր կոնդակով՝ Գանատայի հայոց եկեղեցիները և համայնքները կը հուչակենք ինքնուրոյն թեմական վիճակ, անջատելով զանոնք Միացեալ Նահանգաց թեմական կազմակերպութենէն:

Այսու կը լիազօրենք թեմակալ առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, որ անյապաղ ձեռնարկէ Մեր սոյն հայրապետական վճիռի ի կատար ածման, գործակցութեամբը թեմական խորհուրդի և Գանատայի եկեղեցական համայնքներու վարչութեանց, հնարաւոր կարճ ժամանակի մէջ՝

ա. Կազմելով Գանատայի նոր թեմի կանոնագրութեան նախագիծը, զայն յղելով Մայր Աթոռ ի վաւերացումն.

բ. Յետ թեմական կանոնագրութեան վաւերացման, գումարելով Գանատայի թեմական պատգամաւորական ժողով, որ համաձայն նոր կանոնագրութեան նախատեսութեանց կ'ընտրէ թեմի առաջնորդը և թեմական խորհուրդը, որոնք կը վաւերացուին Մեր հայրապետական կոնդակով, որով և սկիզբ կ'առնէ Գանատայի նոր թեմի գործունէութիւնը:

Կը յանձնարարենք Տ. Թորգոմ սրբազան արքեպիսկոպոսին որ նշանակէ և Գանատա գործուղէ իր մէկ հոգևորական ներկայացուցիչը, վերոյիշեալ միջոցառումներու գործադրութեան պարտականութեամբ, իր ցուցմունքներուն համաձայն:

Այսու Մեր կոնդակով կոչ կ'ընենք Գանատայի բոլոր հայ եկեղեցիներուն, հոգևոր դասուն և համայնքներու վարչական մարմիններուն, ինչպէս և հայոց կրթական, մշակութային և բարեսիրական հաստատութիւններուն, որ սրտցաւ ու շինարար ոգիով իրենց նպաստը բերեն ի խնդիր Գանատայի ինքնավար թեմական կազմակերպութեան ստեղծման, եղբայրական սիրով և համերաշխ գործակցութեամբ, օրինական խաղաղ մթնոլորտի պայմաններու մէջ:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա և երկրպագուս անուանդ Քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»: Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15 նոյեմբերի
1980 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԻԹ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1043